ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի 14.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 14.06.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Մրցույթի հանձնաժողովի 03.05.2017թ. թիվ 2 արձանագրությամբ հաստատվել է «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի երկրորդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնելու փաստը: 04.05.2017թ. Պատվիրատուն պահանջել է ներկայացնել առաջարկված սարքի տեխնիկական բնութագիրը և Ընկերության կողմից նախկինում պատշաճ կերպով իրականացված պայմանագրի պատճենը:

Ընկերությունը 06.05.2017թ. ներկայացրել է բոլոր պահանջված փաստաթղթերը: Պատվիրատուի թիվ 5 արձանագրությամբ Ընկերության կողմից ներկայացված հայտի բոլոր պահանջները, ներառյալ տեխնիկական բնութագիրը, համարվել են բավարար:

Ընկերությունը 2-րդ չափաբաժնով ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկվել է անգործության ժամկետը լրանալուց հետո կնքել պայմանագիր:

Ընկերությունը նշել է, որ 26.05.2017թ. Պատվիրատուն համապատասխան գրությամբ առաջարկել է հինգ օրացույցային օրվա ընթացքում ներկայացնել վավերացված պայմանագիրը: 26.05.2017թ. Ընկերության՝ Հայփոստի N RR242248624AM անդորրագրով պատվիրված նամակն ուղարկվել է Պատվիրատուին:

01.06.2017թ. N6 արձանագրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ Ընկերությունը հրավերով նախատեսված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, և այդ հիմնավորմամբ զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայփոստի հետ պարզաբանման արդյունքում պարզվել է, որ պատվիրված նամակը 29.05.2017թ. դրությամբ եղել է Աբովյանի փոստային մասնաճյուղում, և, ըստ գործող կարգի, Պատվիրատուի ներկայացուցիչն ինքն է վերցնում իրենց հաստատությանն ուղղարկված բոլոր նամակները:

Ընկերությունը նշել է, որ 29.05.2017թ. բազմաթիվ հեռախոսազանգերով տեղեկացրել է կնքված պայմանագիրը փոստով ուղարկված լինելու մասին, սակայն Պատվիրատուն պայմանագիրը վերցրել է 02.06.2017թ. ժամը 15:00-ին:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն՝ տեղյակ լինելով այն մասին, որ կնքված պայմանագիրը գտնվել է Հայփոստի Աբովյանի մասնաճյուղում, փաստաթղթերը միտումնավոր ժամանակին չի վերցրել:

Ընկերությունը նշել է, որ թիվ 6 արձանագրությամբ նախատեսված ժամկետում ստորագրված պայմանագիր չներկայացնելու պատճառով Ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ

որոշումն ընդունվել է 01.06.2017թ. ժամը 15:00-ին՝ փաստաթղթերը փոստից վերցնելուց մեկ օր առաջ:

Ըստ թիվ 7 արձանագրության, Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատելիս եղել են տեխնիկական բացթողումներ, ինչի պատճառով որոշվել է գնահատման արդյունքների հրապարակման նիստի թիվ 5 արձանագրությամբ հաստատված որոշումը համարել անվավեր:

Պատվիրատուի կողմից ընթացակարգի արդյունքների վերագնահատման հաջորդ նիստը հրավիրվել է 06.06.2017թ., սակայն մինչ 14.06.2017թ. նշված նիստի արդյունքների վերաբերյալ Ընկրությանը որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Խորհրդին ներկայացված բողոքով Ընկերությունը խնդրել է՝

Չեղյալ հայտարարել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 01.06.2017թ. N 6 արձանագրությամբ կայացրած «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ը N 2 չափաբաժնով պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ որոշումը և 06.06.2017թ. N 7 արձանագրությամբ կայացած «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ը N 2 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու փաստը անվավեր համարելու մասին որոշումները, և «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող մասնակից՝ վերը նշված չափաբաժնի մասով:

Խորհրդի 19.06.2017թ. նիստին մասնակցում էր «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վլադիմիր Անտաշյանը:

Ընկերությունը 28.06.2017 Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ավէմեդ» ՍՊԸ-ն դիմել էր մրցույթին ներկայացրած ուլտրաձայնային սարքի արտադրող «Չիսոն Մեդիքլ Իմէջինգ» կազմակերպությանը՝ ստանալու լրացուցիչ ինֆորմացիա և պարզաբանում: Ձեզ եմ ներկայացնում արտադրողի նամակ-հաստատումը:

Չիսոն ֆիրման հաստատում է, որ, լինելով առաջատար արտադրող, մշտապես աշխատում է իրենց ուլտրաձայնային սկաներների արդիացման, նոր տեխնոլոգիաների մշակման և ներդրման վրա: Այժմ, իրենք տեխնիկապես բարելավել են Ընկերության կողմից առաջարկված «i9» ուլտրաձայնային սկաների տվիչների հաճախականությունները և պատրաստ են մատակարարել նոր պատվիրված «i9» ուլտրաձայնային սկաները ավելի լայն հաճախականության տվիչներով:

Այսինքն, հայտով ներկայացրած կոնվեքս 2.5-5.3ՄՀց տվիչի փոխարեն կմատակարարեն 2.06.8ՄՀց կոնվեքս տվիչ, իսկ ներկայացրած գծային 4.0-12.8ՄՀց տվիչի փոխարեն 4.0-15.0ՄՀց գծային տվիչ:

Միևնույն ժամանակ արտադրողը նշել է, որ պահանջված 1.2-6.0ՄՀց կոնվեքս տվիչի փոխարեն առաջարկելով 2.0-6.8ՄՀց կոնվեքս տվիչ, տվիչի հաճախականության ցածր սահմանը շատ քիչ է տարբերվում և չի կարող դժվարություն ստեղծել խորը շերտերը հետազոտելու համար: Տասնյակ առաջատար արտադրողների տվիչների նվազագույն հաճախականությունները սկսվում են 2.0ՄՀց-ից:

Ինչ վերաբերվում է գծային տվիչին, ապա արդիացված 4.0-15.0ՄՀց տվիչի հաճախականության սահմանները ավելի լայն են քան պահանջված 5.5-14.0 ՄՀց, որը, ըստ Պատվիրատուի գծային տվիչի ամենակարևոր ցուցանիշներից է և թույլ կտա մասնագետին ավելի տեսանելի դարձնել մակերեսային գոյացությունները պատկերավորելու համար:

Պահանջված անոթների հունի պատկերավորման ռեժիմի բացակայության վերաբերյալ արտադրողը նշել է, որ սարքը ունի անոթների հոսքի չափման ծրագիր, որը նշված էր Ընկերության ներկայացրած բնութագրում և այդ ծրագիրը մաքսիմալ ապահովում է դանդաղ հոսքի անոթների և մանր անոթների գունավոր զգայունությունը և թույլ է տալիս ստանալ արյան բարձր տեսանելիություն:

PRF հաճախականությունը անդադար-ալիքային դոպլերի համար 6250-50000Հց պահանջված 1400-49700Հց փոխարեն, այսինքն նույնպես առավել ցուցանիշ է:

Կան նաև մի փոքր տարբերություններ, օրինակ սկանավորման խորությունը 40 սմ-ի փոխարեն 6.5 սմ է, պատկերի մեծացումը 18 անգամ է 25-ի փոխարեն, որը նույնպես թույլ է տալիս պատկերը բավականին մեծացնել մանր դետալների վիզուալիզացիայի համար:

Արտադրողը նշել է, որ այդ չնչին տարբերությունները չեն ազդում սարքի որակի կամ ֆունկցիոնալ արդյունավետության վրա և պատահական չէ, որ Չիսոն ֆիրման արտադրում է ուլտրաձայնային սկաներներ և տվիչներ ավելի քան 20 տարի և բավարարում է Եվրոպական ստանդարտների պահանջներին:

Ընկերությունը հայտնել է, որ պարզապես, ակնհայտ է, որ ուլտրաձայնային սարքի տեխնիկական չափորոշիչները կազմված են եղել հավանաբար մրցույթի մասնակից ընկերություններից որևիցէ մեկի կողմից: Տեխնիկական չափորոշիչները ընտրված են կոնկրետ ֆիրմայի, կոնկրետ սարքի տվյալներից, որը հակասում է գնումների մասին

օրենքի պահանջներին: Տվյալ պայմաններում գտնել երկրորդ ուլտրաձայնային սկաներ նույնատիպ պարամետրերով անհնար է, հակառակ դեպքում կլիներ սարքի արտատպում:

Ընկերությունը նշել է, որ իրենց կողմից առաջարկված սարքը զգալիորեն ֆինանսապես մատչելի է, ապահովում է անհրաժեշտ ֆունկցիաները, ունի բարձր վիզուալիզացիա: Տվյալ արտադրողի սարքերը արդյունավետ և անխափան շահագործվում են Երևան քաղաքի տասնյակ հիվանդանոցներում, բժշկական կենտրոններում և պոլիկլինիկաներում:»:

2. «<u>Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն</u>» <u>ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Պատվիրատուն 23.06.2017թ. թիվ 375 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) կարիքների համար բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.05.2017թ. թիվ 5 արձանագրությամբ, երկրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ին, որին անգործության ժամկետի ավարտից հետո, 26.05.2017թ. համապատասխան գրությամբ, էլեկտրոնային փոստի միջոցով, ներկայացվել է պայմանագրի կնքման նախագիծը:

Պատվիրատուն նշել է, որ «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն 29.05.2017թ. ժամը 12:00-ին arturabg@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է գրություն այն մասին, որ հաստատված պայմանագրի օրիգինալ տարբերակը ուղարկվել է փոստով: Սակայն, կենտրոնը հաստատված պայմանագիրը հրավերով նախատեսված ժամկետում չի ստացել, որի արդյունքում 01.06.2017թ. գնահատող հանձնաժողովի թիվ 6 արձանագրությամբ Մասնակիցը պայմանագիրը ստորագրելու իրավունքից զրկվել է: 22.12.2010թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի երրորդ կետի համաձայն, եթե ընտրված մասնակիցը պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը, և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ

պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն նշել է նաև, որ «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն իր բողոքում հայտնել է, որ «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ պարզաբանման արդյունքում պարզվել է, որ պատվիրված նամակը 29.05.2017թ. դրությամբ եղել է Աբովյանի փոստային մասնաճյուղում և ըստ կարգի, «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչն ինքն է վերցնում իրենց հաստատությանն ուղարկված բոլոր նամակները: Պատվիրատուն հարկ է համարել նշել, որ Կենտրոնը «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ ունի 08.07.2017թ. կնքած թիվ PD-197-07-14 պայմանագիր, որի 6-րդ գլխի 6.1 կետով նախատեսված է առաքանու՝ հասցեատիրոջը հանձնելու ընթացակարգը, համաձայն որի նամակագրական թղթակցություն հանդիսացող գրանցվող /պատվիրված/ կամ գնահատված փոստային առաքանիները ստացողի հասցեն սպասարկող փոստային բաժանմունք մուտքագրվելու օրը ընկերության փոստատարի միջոցով աշխատանքային ժամերի ընթացքում առաքվում են ըստ առաքանիների վրա նշված հասցեների: Կենտրոնի ներկայացուցիչը ուղարկված առաքանին կարող էր վերցնել այն դեպքում, երբ այցելեր Աբովյանի փոստային բաժանմունք՝ առաքանի ուղղարկելու կամ փոստային ծառայությունից օգտվելու նպատակով:

Պատվիրատուն թիվ 5 արձանագրության 1.2 և 1.3 կետով մասնակցին երկրորդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու փաստը անվավեր համարելու մասին գնահատող հանձնաժողովի 05.06.2017թ. 7-րդ արձանագրության վերաբերյալ նշել է, որ հանձնաժողովի անդամ Արսեն Դանիելյանը 02.06.2017թ. ներկայացրել է զեկուցագիր այն մասին, որ տեխնիկական բնութագիրը գնահատելիս իր անուշադրության պատճառով սխալ է գնահատել, որի համար տվյալ անդամը ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ հանձնաժողովի մյուս անդամներն արժանացել են բանավոր նախազգուշացման: 02.06.2017թ. հանձնաժողովի քարտուղարը զեկուցագիր է ներկայացրել՝ նշելով որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Գնումների կազմակերպման մասին» 10 փետրվարի 2011թ. 168-Ն որոշման 30-րդ կետի պահանջները, ըստ որի, եթե գնհատող հանձնաժողովը չի ապահովում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, ով

1) զեկուցագիրն ստանալու օրը՝

ա. հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

բ. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման.

3) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

ա. հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ՝

բ. հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:

Պատվիրատուն նշել է, որ Կենտրոնի իրավաբանը մասնագիտական եզրակացություն ստանալու համար 02.06.2017թ. դիմել է «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին, հաշվի առնելով, որ Ընկերությունը զբաղվում է բժշկական, լաբորատոր և անալիտիկ սարքավորումների ներմուծմամբ, հանդիսանում է համաշխարհային առաջատար ընկերությունների ներկայացուցիչ և ունի համապատասխան մասնագիտացում ունեցող, եվրոպական երկրներում վերապատրաստված և սերտիֆիկացված մասնագետներ:

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն 05.06.2017թ. կից գրությամբ ներկայացրել է մասնգիտական եզրակացություն էական տեխնիկական անհամապատասխանությունների վերաբերյալ:

05.06.2017թ. հրավիրվել է հանձնաժողովի արտահերթ նիստ: Տեխնիկական բացթողումների պատճառով հանձնաժողովի անդամները անվավեր են ճանաչել գնահատման արդյունքների հրապարակման նիստի թիվ 5-րդ արձանագրության 1.2 և 1.3 կետերով Մասնակցին ընտրված մասնակից ճանաչելու փաստը՝ վերագնահատում

նշանակելու նպատակով, հետևաբար պայմանագիր կնքելու առաջարկը և 6-րդ արձանագրությունը նույնպես համարվել է անվավեր:

06.06.2017թ. հրավիրված նիստում տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության վերաբերյալ կազմվել է 8-րդ արձանագրությունը, և Մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն: Այդ մասին Մասնակիցը պատշաճ ծանուցվել է էլեկտրոնային փոստի միջոցով, սակայն Մասնակիցը հարցմանը չի պատասխանել, ինչի արդյունքում 09.06.2017թ. N 9-րդ արձանագրությամբ, հայտերի վերագնահատման նիստին Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է հետևյալ հիմնավորմամբ.

«Տեխնիկական բնութագրում բացակայում են հրավերով պահանջվող վիրտուալ լուսավորման ապահովումը, անոթների հունի պատկերավորման ռեժիմը բարձր տարածական /ժամանակային հնարավորությամբ, մազանոթների հունի պատկերավորման ռեժիմի հնարավորության բարձր տարածական/ժամանակային լուծմամբ և կադրերի բարձր հաճախականությամբ, PRF հյուսվածքային դոպլերի համար 2100–13500 Հց կադր/վրկ հաճախականությունը հյուսվացքային դոպլեր ռեժիմում ոչ պակաս քան 1000, սկանավորման խորություն ոչ պակաս քան 40 սմ, PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար ոչ պակաս քան 1400–49700 Հց, պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում ոչ պակաս քան 25 անգամ, «սառեցված» պատկերի մեծացում ոչ պակաս քան 25 անգամ: Հրավերով նախատեսված է կոնվեքսային տվիչի հաճախականությունների դիապազոն առնվազն 1.2-6.0 ՄՀց, իսկ ներկայացրածի դիապազոնը 2.5–5.3 ՄՀց է, պահանջվող գծային տվիչի հաճախականությունների դիապազոնը առնվազն 5.5-14.0 ՄՀց, իսկ ներկայացրածի դիապազոնը 4–12.8 ՄՀց է:

Պատվիրատուն նշել է, որ վերը նշվածի մասին Մասնակիցը պատշաճ ծանուցվել է էլեկտրոնային փոստի միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն եզրակացրել է, որ Մասնակցի կողմից ներյայացված թվային ուլտրաձայնային համակարգ երկու տվիչով «i9» սարքավորումը չի համապատասխանում հրավերով պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրին, ըստ այդմ, պայմանագիր կնքելը Մասնակցի հետ կլինի ոչ նպատակահարմար Կենտրոնի կարիքների համար:

Ի լրումն 23.06.2017թ. թիվ 375 գրության, Պատվիրատուն 27.06.2017թ. թիվ 387 գրությամբ Խորհրդին է ներկայացրել հրավերով պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրին չհամապատասխանող և բացակայող էական ցուցանիշները:

Մասնավորապես.

1. Պահանջվող սկանավորման խորություն ոչ պակաս, քան 40 սմ, որը տալիս է հնարավորություն սկանավորելու բարդ կոնստիտուցիոնալ կառուցվածքով կամ գեր մարդկանց;

2. Պահանջվող PRF-իմպուլս-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 1400–49700, հայտնաբերվող մաքսիմալ արագությունը առնվազն 35 սմ/վրկ., հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել, քան 0,05 սմ/վրկ, որը տալիս է հնարավորություն իմպուլս ալիքային դոպլեր ռեժիմում ինչպես շատ ցածր, այնպես էլ բարձր արագությամբ հոսքերի մասին ճշգրիտ քանակական տվյալներ;

3. Պահանջվող պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում ոչ պակաս, քան 25 անգամ, "սառեցված" պատկերի մեծացում ոչ պակաս, քան 25 անգամ, որը թույլ է տալիս պատկերը մեծացնել առնվազն 25 անգամ, հատկապես մանր դետալների վիզուալիզացիայի համար;

4. Պահանջվող գծային տվիչի հաճախականությունների դիապազոն առնվազն 5,5-14,0 ՄՀց մազանոթային հունի պատկերավորում բարձր տարածական /ժամանակային հնարավորությամբ: Մասնակիցը առաջարկել է 4,0-12,8 ՄՀց, ինչը կսահմանափակի մասնագետի տեսանելիությունը ավելի մակերեսային գոյացությունները պատկերավորելու համար, ինչը գծային տվիչի համար ամենակարևոր ցուցանիշներից է;

5. Պահանջվող կոնվեքսային տվիչի հաճախականությունների դիապազոն առնվազն 1,2-6,0 ՄՀց: Մասնակիցը առաջարկել է, 2,5-5,3 ՄՀց, ինչը մասնագետին թույլ չի տա հետազոտելու ավելի խորը շերտերն ու դժվարություններ կառաջացնի խոշոր կառուցվածքով պացիենտների սկանավորման ընթացքում;

6. Պահանջվող անոթների հունի պատկերավորման ռեժիմ բարձր տարածական/ժամանակային հնարավորությամբ: Մասնակցի ներկայացրած բնութագրում առկա չէ նման հնարավորություն, ինչն իրենից ներկայացնում է գունավոր դոպլերի կատարելագործված տարբերակը, որն օգնում է մասնագետին հստակ տեսնել դանդաղ հոսքով անոթները, նույնիսկ այնպիսիք, որոնք գունավոր դոպլեր ռեժիմով չեն երևում, որը հանդիսանում է մասնագետի համար սահմանային դեպքերում տարբերակիչ խտորոշման կարևոր գործիք:

Խորհրդի 19.06.2017թ. նիստին մասնակցում էր «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումներ համակարգող Արթուր Աբգարյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի 14.06.2017թ. ներկայացրած բողոքը, ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերը, «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.05.2017թ. N 2, 18.05.2017թ. N 5, 01.06.2017թ. N 6, 05.06.2017թ. N 7, 06.06.2017թ. N 8, 09.06.2017թ. N 9 կայացած նիստերի արձանագրությունները, «Հայփոստ» ՓԲԸ-ի և «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 08.07.2017թ. կնքված PD-197-07-14 պայմանագիրը, ուլտրաձայնային սարքը արտադրող ընկերության կողմից՝ առաջարկվող և հրավերով նախատեսված սարքերի համեմատության վերաբերյալ կարծիքը, «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 23.06.2017թ. թիվ 375 և 27.06.2017թ. թիվ 387 գրությունները, Պատվիրատուի և Ընկերության ներկայացուցիչների դիրքորոշումները և կարծիքները.

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

«ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն կազմակերպված ընթացակարգի 2-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 18.05.2017թ. N 5 արձանագրությամբ «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ին Ընթացակարգի երկրորդ չափաբաժնի մասով ճանաչել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն 26.05.2017թ. Ընկերությանն է ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովը 01.06.2017թ. N 6 արձանագրությամբ Ընկերությանը զրկել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից՝ հրավերով նախատեսված ժամկետում ստորագրված պայմանագիրը չներկայացնելու հիմնավորմամբ:

Սակայն, Հանձնաժողովը 05.06.2017թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 7 արձանագրությամբ որոշում է կայացրել 18.05.2017թ. N 5-րդ արձանագրության 1.2 և 1.3 կետերով «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից ճանաչելու որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկը և 01.06.2017թ. N 6 արձանագրությունը համարել անվավեր և հրավիրել վերագնահատման նիստ, քանի որ «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ներկայացրած տեխնիկական բնութագրերը գնահատելիս եղել են տեխնիկական բացթողումներ:

Հանձնաժողովը 06.06.2017թ. ժամը 10:30-ին կայացած N 8 արձանագրության 1.1 կետով արձանագրել է հետևյալը.

««ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրում տեղ գտած անհամապատասխանությունները հետևյալն են.

Տեխնիկական բնութագրում բացակայում են հրավերով պահանջվող վիրտուալ լուսավորման ապահովումը, անոթների հունի պատկերավորման ռեժիմը բարձր տարածական /ժամանակային հնարավորությամբ, մազանոթների հունի պատկերավորման ռեժիմի հնարավորության բարձր տարածական/ժամանակային լուծմամբ և կադրերի բարձր հաճախականությամբ, PRF հյուսվածքային դոպլերի համար 2100–13500 Հց կադր/վրկ հաճախականությունը հյուսվացքային դոպլեր ռեժիմում ոչ պակաս քան 1000, սկանավորման խորություն ոչ պակաս քան 40 սմ, PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար ոչ պակաս քան 1400–49700 Հց, պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում ոչ պակաս քան 25 անգամ, «սառեցված» պատկերի մեծացում ոչ պակաս քան 25 անգամ: Հրավերով նախատեսված է կոնվեքսային տվիչի հաճախականությունների դիապազոն առնվազն 1.2-6.0 ՄՀց, իսկ ներկայացրածի դիապազոնը 2.5–5.3 ՄՀց է, պահանջվող գծային տվիչի հաճախականությունների դիապազոնը առնվազն 5.5-14.0 ՄՀց, իսկ ներկայացրածի դիապազոնը 4–12.8 ՄՀց է:»:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու նշված անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից նշված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Հանձնաժողովը 09.06.2017թ. կայացած նիստի N 9 արձանագրությամբ որոշում է կայացրել Ընկերության հայտը տեխնիկական բնութագրի մասով գնահատել անբավարար և մերժել:

Բողոքի քննության նպատակով 19.06.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը չհերքեց այն փաստը, որ Ընկերության կողմիցհեռախոսազանգով տեղեկացվել է, որ կնքված պայմանագիրը փոստով՝ պատվիրված նամակով, ուղարկվել է Պատվիրատուին և 29.05.2017թ. գտնվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի Աբովյանի փոստային բաժանմունքում:

Խորհրդի այն հարցին, թե ինչպես է կատարվում նամակների առաքումը կամ ստացումը, Պատվիրատուի ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ ըստ գործող կարգի, նամակագրական թղթակցություն հանդիսացող գրանցվող առաքանիներն առաքվում են փոստատարի միջոցով, և Պատվիրատուի ներկայացուցչի կողմից առաքանին կարող էր վերցվել այն դեպքում, եթե վերջինս այցելեր Աբովյանի փոստային բաժանմունք՝ առաքանի ուղարկելու կամ փոստային ծառայությունից օգտվելու նպատակով՝ հավելելով նաև, որ Պատվիրատուի ներկայացուցիչը փոստային բաժանմունք է այցելում յուրաքանչյուր ուրբաթ օրը:

Պատվիրատուն Խորհրդին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ վկայակոչել է վերջինիս և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև 08.07.2017թ. կնքված PD-197-07-14 պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետը, որի համաձայն, նամակագրական թղթակցություն հանդիսացող գրանցվող (պատվիրված) կամ գնահատված փոստային առաքանիները, ինչպես նաև հեռագրերը և մինչև երկու կիլոգրամ քաշը չգերազանցող գրանցվող այլ փոստային առաքանիներն ստացողի հասցեն սպասարկող փոստային բաժանմունք մուտքագրվելու օրը ընկերության փոստատարի միջոցով աշխատանքային ժամերի ընթացքում առաքվում են ըստ առաքանիների վրա նշված հասցեների:

Հաշվի առնելով նշված փաստերը և ուսումնասիրելով Հայփոստ» ՓԲԸ-ի և «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 08.07.2017թ. կնքված PD-197-07-14 պայմանագիրը, Խորհուրդն արձանագրում, որ Հանձնաժողովի կողմից «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ին՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում ստորագրված պայմանագիրը չներկայացնելու հիմնավորմամբ, պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելն իրավաչափ չէ, քանի որ Պատվիրատուն իմանալով, որ Ընկերության կողմից ստորագրված պայմանագիրը 29.05.2017թ. գտնվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի Աբովյանի փոստային բաժանմունքում, որևէ միջոց չի ձեռնարկել այն վերցնելու

ուղղությամբ, իսկ փոստային ծառայությունը չկատարելով վերջինիս և Պատվիրատուի միջև կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունը՝ ցուցաբերել է անգործություն:

Խորհրդին ներկայացված 23.06.2017թ. թիվ 375 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Հանձնաժողովը 05.06.2017թ. կայացած արտահերթ նիստի թիվ 5 արձանագրությամբ Ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու որոշումը անվավեր է ճանաչել՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 05.06.2017թ. Պատվիրատուին ներկայացրած մասնգիտական եզրակացության հիման վրա:

Խորհրդի այն հարցին, թե արդյոք «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն ունի համապատասխան մասնագիտական եզրակացություն տրամադրելու լիազորություն, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանեց, որ ոչ, սակայն պնդեց, որ այնուամենայնիվ մերժման հիմք հանդիսացող արձանագրված անհամապատասխանությունները հիմնավոր են և Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

«ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի տնօրենը ընդունեց այն փաստը, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտով առաջարկված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են Պատվիրատուի կողմից ներկայացված անհամապատասխանությունները, սակայն հավելեց, որ առկա տարբերությունները չեն ազդում սարքի որակի կամ ֆունկցիոնալ արդյունավետության վրա:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտով առաջարկված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ և չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն մերժելով «ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՎԷՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից 14.06.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**